**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4-Ն**

19 հունվարի 2017 թվական գյուղ Նահապետավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 45-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին՞՞ Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի և հիմք ընդունելով ,,Տեղական տուրքերի և վճարների մասին՞՞ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ընդունված 16 դեկտեմբերի 2016 թվականին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի ավագանին՝

**Որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 45-Ն որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 20-ից:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ-4** | **Դեմ-0** | **Ձեռնպահ-0** |
|---|---|---|
| Գրիգորյան Արտավազդ | | |
| Եզեկյան Սարիբեկ | | |
| Թադևոսյան Կարեն | | |
| Պետրոսյան Մխիթար | | |

Նահապետավան համայնքի ղեկավար Գ.Պետրոսյան

19 հունվարի 2017թ.
գ.Նահապետավան